նայ քեաբ պլբրի, տանեյնք տայնք լնոնց։ Քեաբերը առլն, ախ-
չրկայ խետ էկան տուն։

Ախչիկը ասաց լնոր խօր, ինչ որ տեսաւ։

51. Թակեաւորը կանչեց ասաց.—Տըղէք, էն քեաբեր պլբրիք։

Ասին.—խա՛։

—Ցո՞ւր ա էն քեաբեր։

—Տիւռը տրեր էնք, թոխ լնոնց տէրերը կեան տանեն, տե-
ղը տնեն, մենք լնոնց տեղ չընք կիտի։ Զուր ըստայ պլբրիր էյնք,
որ[1] թոխ լնոնք տանեն։

52. Թակեաւոր ասաց.—Ինոնք չըն կենայ տանի ներս։

Ասին.—Բա առաչ ինչպէս էն տարեր ներս։

Ասացին.—Առաչ կէսմէշներ, ծիրեր լծեր էն, էտ քեաբեր
պլբրիր էն լնոնց տեղ, նորը ծիթխած չլնիր էն։

53. Սանտասր ասաց.—Թոխ կեան խրտ ձի, տուներ պա-
նան, տեղերը շանց տան, ես քեաբեր կը տանեմ, տեղերը կը
տնեմ։

Տէրերը կնացին Սանտասրի խետ, շանց տուին քեաբի տեղ։
Սանտասր քեաբերը տեղ տրեց, տառցաւ, էկաւ Թակեաւորի
մօտ։

54. Թակեաւոր ասաց —Սանտասր, ասա, ինչ կուզես տամ քե։

Սանտասր ասաց.—Պամ չըմ ուզի։

Թակեաւոր իրեր անքամ խարցնեց. «Ի՞նչ կուզես տամ»։
Սանտասր պամ չուզեց Թակեաւորից։

55. Թակեաւորն ասաց.—Որ պամ չըս ուզի, ախչիյ չըխս[2]
քեօն ա, արի քէ փսակեմ։

Սանտասր ասաց.—Ես մկայ վախտ չունեմ փսակուել։

56. Էտ տեղից Սանտասր, Բաղտասար կաց պարով արին,
էկան Աջամ Թակեաւորի քեաղաք։ Ճանբալա Սանտասր ասաց
Բաղտասարին.—Ա՛խպէր, էն խալիւոր մարթ, որ էկաւ էն կլոր
քեար, էն քէթր[3] պան, էն ոսկէ պան խտու մե, մէյնք չընք
կիտի էտ ինչ պան ա. մռացայնք, չը խարցնեցինք, թէ խոնք
ընչի՞ խամար ա։

57. Էտա տեղ կը մտածեն Ճանբալա, մէկ էլ տեսան մէկ խա-
լիւոր մարթմ էնոնց առչև կէրթայ։ Խասան էտ մարտիւն։ Սա-
նտասր ասաց.—Ա՛խպէր, էս էն խալիւորն ա։ Բաղտասար ա-
ասաց.—Ես չըմ ճանչընայ. կայնի, թէ էն ա, մեզ կը խարցնի,
մենք էլ ինոր կը խարցնենք, թէ էտա պաներ ընչի՞ խամար ա։

58 Խասան խալիւորին, խալիւոր ասաց։—Ա՛յ տղէք, ընչի՞
կը մտածէք էտքան խոր։

---

1. Այժմս էլ։ 2. Արդէն։ 3. Կեռ, թեք։